ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

02.09.2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 14-ը:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի աշխատանքային պլանի (ըստ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի) և գիտական խորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի (2018-19 ուստարի) քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. 2019-2020 ուստարվա ֆակուլտետի դեկանատի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. 2018- 2019 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

***1. Լսեցին.- Ֆակուլտետի աշխատանքային պլանի (ըստ 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի) և գիտական խորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի(2018-19 ուստարի) քննարկման և հաստատման մասին***

Գ. Ավետիսյանը նշեց, որ կազմվել է ֆակուլտետի 2019-20 ուստարվա աշխատանքային պլան (ըստ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի), որտեղ ներառված են այն ռազմավարական խնդիրները, որոնք պետք է իրականացնել 2019-2020 ուստարում: Հիմք ընդունելով աշխատանքային պլանը կազմվել է ֆակուլտետի գիտական խորհրդի 2019-2020

ուստարվա նիստերի պլան-ժամանակացույցը: Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարվա կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի և գիտխորհրդի 2019-2020 ուս. տարվա նիստերի պլան-ժամանակացույցի նախագծերը /նախագծերը կցվում են/

***Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Գ. Հովհաննիսյանը:***

Նրանք նշեցին, որ ֆակուլտետի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը նպաստում է ֆակուլտետի գիտական, մանկավարժական աշխատանքների արդյունավետ կատարմանը:

***Որոշեցին – հավանություն արժանացնել ֆակուլտետի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը և այն ներկայացնել մասնաճյուղի տնօրենի հաստատմանը:***

***- հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի 2019-20 ուստարվա նիստերի պլան-ժամանակացույցը:***

**2.** ***Լսեցին- 2019-20 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատի կազմի քննարկման և հաստատման մասին / Զեկ. Գ. Ավետիսյան/:***

Դեկանը ներկայացրեց դեկանատի կազմը: Նա նշեց, որ այն ձևավորվել է հիմք ընդունելով ֆակուլտետի կանոնադրության պահանջները /կետ 45/: Գ. Ավետիսյանը առաջարկեց քննարկել և հաստատել.

Ավետիսյան Գայանե դեկան ժ/պ

Հովհաննիսյան Գուրգեն Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,

Միքայելյան Միքայել Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ,

Ասիլբեկյան Պավել ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,

Ալեքսանյան Անժելա ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար,

Մադաթյան Լուիզա ֆակուլտետի ՈՒԽ նախագահ

Թիրաբյան Տիգրանուհի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

*Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Եգանյանը:*

*Որոշեցին – հաստատել 2019-20 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատի կազմը:*

*3. Լսեցին - ֆակուլտետի դեկանատի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:/Զեկ. Գ. Ավետիսյան/*

2019-2020 ուս. տարվա դեկանատի աշխատանքային պլանը /օրացուցային պլանը/ ներկայացրեց դեկան Գ. Ավետիսյանը:

*Արտահայտվեց ին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Ուլիխանյանը:*

Նրանք նշեցին, որ դեկանի ներկայացրած դեկանատի աշխատանքային պլանը կնպաստի ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել:

*Որոշեցին -հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանատի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանը:*

*5. Լսեցին - 2019-2020 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման մասին /Զեկ.Գ. Ավետիսյան/:*

Գ. Ավետիսյանը նշեց, որ մանդատային հանձնաժողովը ձևավորվել է հիմք ընդունելով «ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի /10 կետ/ պահանջները և ներկայացրեց 2019-2020 ուս տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը.

| | |
|---|---|
| 1. Գ. Ավետիսյան | դեկան, մանդատային հնաձնաժողովի նախագահ, |
| 2. Պ. Ասիլբեկյան | ֆակուլտետի արհմիության նախագահ, մանդատային հանձնաժողովի քարտուղար, |
| 3.Ա. Սարիբեկյան | ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, |
| 4. Լ. Մադաթյան | ֆակուլտետի ՈՒԽ նախագահ |
| 5. Տ. Թիրաբյան | ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ |

*Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:*

*Որոշեցին - հավանություն տալ 2019-2020 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի ներկայացված մանդատային հանձնաժողովի կազմին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:*

*3. Լսեցին - 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:*

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Այն տրվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես ֆինանսական խրախուսանք: Ըստ մասնաճյուղում գործող կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են մի քանի ուսանողներ: «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության III կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Լուիզա Մադաթյանը: «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Ֆինանսներ» մասնագիտության III կուրսի ուսանողուհի Սաթենիկ Հարությունյանը: «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած, ֆակուլտետի ՈՒԳ-ի նախագահ, «Տնտեսագիտություն» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Տիգրանուհի Թիրաբյանը:

*Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:*

Արտահայտվողները նշեցին, անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

*Որոշեցին - Հավանության արժանացնել 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդներ Տիգրանուհի Թիրաբյանի, Սաթենիկ Հարությունյանի և Լուիզա Մադաթյանի թեկնածությունները և ներկայացնել տնօրինության հաստատմանը:*

*Գիտխորհրդի նախագահ՝* *Գ. Ավետիսյան*

*Քարտուղար՝* *Ա.Ալեքսանյան*